նայու, երեք և չորս հայք, չորս հինգ ամիս որք աստի գնացեալ, որք թէպէտ և յայլ ուր գնազարէթ պահեցին, տակաւին անդ արգելեալ կան, ոչ թողուն գնալ ի Վիէնա։ Այս քաղաքս, բնակողացս մի լայէրինդոս դարձաւ, որք ոչ ի տաճկաստան, և ոչ ի քրիստոնէաստան կարեմք գնալ. Աստուած այց արասցէ, բայց միայն պատերազմողքն զան և երթան, մինչև ցարդ նշմարանք զօրաց սոցա ի մօտակայ տեղիս երևեցան, վեց նաև աստ ի պատրաստի են, վեց ևս երեք շաբաթն որ ի Վէնայու ելեալ են գալ այսր։ Նաև իբրու 40 օր է 350 մառինար և ԺԳ գավալէր մալթէզ եկին աստ ի դրէստու օգնութիւն սոցա, զերկու նաւն սոցա եառուն, ասեն թէ յետի եկող նաւերուն մէջ գոն մալթէզք այլ աւելի քան զայս. նաև ճէնուէզք, ալիկոռէզք, փափականք, և ըշկեաւօնք։ Լինին ԺԲ նաւք քառասնական և երեսնական թօփ կրողք, նաև զօրաց ընթացք բազումք լսին, ոչ գիտեմք թէ զինչ առնելոց են, և առ ինչ եզերելոց է իրակութիւնն, տէր մի արասցէ որպէս ի հերու հոչակն մեծ էր, և կատարածն եղև վատթար։ Նմանապէս և թշնամին ի վերայ մօտաւայ գետոյ ի վաղուց զկամուրճս կապեալ պահեն զօրքն, սպասեն գալստեան մեծ զօրուն իւրեանց, և յամենայն աւուր զգալստենէ նոցին աստ, լսեմք. գուցէ լինիցի սուտ։ . . . . .

Գերյարգութեան քում
Պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ վրդ. Սեբաստացի

1739 Յունիսի 13
ի Պէլրդատ

ՁԸ.

Գերյարգելոյ Այբրայ հօրդ մերոյ տեառն տեառն Միխիթարայ Աստուածաբանութեան Վարդապետի

. . . Զօրք սոցա երևի թէ ԽՌ իցեն, և ասեն թէ գալոց են ևս փառֆիչի և փոքնչիփէ նայինպէռքի զօրքն իբրու ԻՌ, հասանելոց են այսոցիկ զարմացման։ Նմանապէս ի կողմն դմշուվարու գոն զօրք, թէ և ոչ այսքանք, որոց գլուխն է փոքնչիփէ լօգովիցն, և ասեն թէ մօսկովի զօրք գոն ևս անդ։ Առ զինչ եզերելոց է, ոչ գիտեմք։ Նմանապէս վեց նորաշէն նաւքն ի յունիսի 21 եկին աստ ի վէնայու, 500 ճէնիվիզ մառինարով և նաւապետով. բնաւ նաւքն 13.9 սոցա հանդէպ բանակին ի վերայ թունային նստեալ, և 4 աստ մերձ պարսպաց քաղաքիս որ ի վերայ թունայի, պահապանք կարմնջոց, երկու կարմունջ ի վերայ սավայու, և մի ի վերայ թունայու։ . . .

Գերյարգութեան քում
Պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Միքայէլ Սեբաստացի

1739 յուլիսի 4
ի Պէլրդատ

ՁԹ.

Պելկրատու Միխիթարեան առաքելութեան երրորդ առաջնորդն է — յետ Հ. Միքայէլ Սեբաստացւոյ — Հ. Յակոբ Կարնեցի, որ կը ձեռնարկէ իւր պաշտօնին՝ 1739 Յուլիսին։

Ինքն ևս կը սկսի մտնել մեր նամակագիրներու կարգին մէջ՝ տալով հետևեալ երկու թուղթերը, որոնք կարևոր տեղեկութիւններ են Օսմանցւոց և Աւստրիացւոց միջև տեղի ունեցած պատերազմին շուրջ։